

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Պահեստ 1 ՍՊԸ -ն ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/108 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Պահեստ 1 ՍՊԸ	"Լամինատե դարակաշար, նախատեսված արխիվային փաստաթղթերի պահպանման համար: Լամինատի հաստությունը՝ 1,8-2,0սմ: Պետք է տեղադրվի պատի երկայնքով, հատակից մինչև առաստաղ: Ընդհանուր մոտավոր չափերը՝ 10 մետր երկարություն, 265 սմ բարձրություն, 40 սմ խորություն (ներսի մաքուր խորությունը): Պատի մեջտեղի մասում մոտավոր 85 սմ լայնքի և 30սմ բարձրությամբ առկա է առաստաղի հեծան: Դարակաշարը պետք է բաղկացած լինի մի քանի առանձին կտորներից, որոնք տեղում կողապատերով կամրացվեն միմյանց, կտորների քանակը ելնելով պատի կոնֆիգուրացիայից և ամրության տեսանկյունից պետք է լինի 11 հատ, հատակից մինչև առաստաղ 1 կտոր, սակայն Մասնակիցը կարող է առավել լավ նախագիծ առաջարկելու դեպքում, նախապես համաձայնեցնելով Պատվիրատուի հետ, ապահովելով ամրությունը և ֆունկցիոնալը, ստանալով Պատվիրատուի համաձայնությունը փոխել այդ քանակը՝ պահպանելով ընդհանուր մակերեսը: 11 կտորից յուրաքանչյուրը պետք է ունենա 4 դուռ, յուրաքանչյուր դուռը 3 ծխնիով, յուրաքանչյուր ծխնին վերջում ավտոմատ փակող տեսակի: Դռների բռնակները փայլուն չժանգոտվող մետաղից, 15-25սմ երկարության, ուղղահայաց ամրացված, լուսնաձև, այնպիսին, որ եզրերը կանեն լամինատին: Կտորի ներսում, յուրաքանչյուր հարկին, կենտրոնում պետք է լինի մեկ միջնապատ 25-40սմ խորության,

դիմացից հատակի և առաստաղի հարթությանը հավասար տեղադրված, ընդ որում յուրաքանչյուր միջնապատը պետք է ամրացված լինի առնվազն հարկի հատակին և առաստաղին, միջնապատերի ամրացումները կարող են լինել պտուտակավոր կամ պայտե չորսուկներով, ըստ հեշտության, առանց որևէ անկյունային դետալների կիրառման: Հարկերի քանակը 265սմ-անոց հատվածում 8, հեծանի հատվածում 7, կտորի հարկի դետալները ամբողջական, առաջին հարկը պետք է լինի գետնից բարձր 5-8սմ, առաջին հարկի մաքուր բարձրությունը 40 սմ, մնացած հարկերը հավասարաչափ բարձրության: Կտորի մեջքը նույնպես պետք է լինի լամինատից, ընդ որում բոլոր լամինատե դետալները, այդ թվում մեջքը, պետք է լինեն նույն լամինատից, մեկ ամբողջական կտորից, առանց կցոնների: Հարկերը պետք է ձգված լինեն և կողային պատերին և մեջքին, պտուտակների միջոցով, առանց անկյունային դետալների: Լամինատի յուրաքանչյուր դետալի յուրաքանչյուր եզր, որը տեսանելի է կտորի 6 կողմից(տարածության մեջ, անկախ տանիք կամ հատակ) պետք է լինի պատված պլաստիկ եզրաշերտով(ՊիՎիՍի), որի հաստությունը չպետք է լինի պակաս 0,5մմ-ից: Ձգված բոլոր պտուտակների երևացող գլուխները պետք է փակված լինեն ինքնակաշուն կլորակով:

Դարակաշարը պետք է լինի բեժ գույնի, սակայն երանգը պետք է տեղում նմուշներով համաձայնեցվի Պատվիրատուի հետ: Պտուտակներով ձգումների արդյունքում որևէ դետալի վրա ճեղքվածք լինելու դեպքում ամբողջությամբ Կտորը պետք է փոխարինվի և տեղում Կտորի քանդել, դետալ փոխելը արգելվելու է: Կտորների տեղադրման և միմյանց ամրացման ընթացքում, հատակի մասում հարթության կարգավորման դետալներ տեղադրելով Մատակարարը պարտավոր է ապահովել ամբողջ դարակաշարի ուղղահայացությունը, կտորների հարթությունների հավասարությունը, դռների սիմետրիկան, ճիշտ բացվել փակվելը:

Դարակաշարը պետք է վերին հատվածում մի քանի տեղից ձգվի պատին, բարձրության պատճառով չճոճվելու համար: Մինչև դարակաշարի պատրաստելը Մատակարարը պետք է տեղում հստակ իրականացնի չափագրումը: Դարակաշարի տեղադրումը, մոնտաժումը, վերոգրյալ ամբողջ ֆունկցիոնալի ապահովումը, պետք է իրականացնի Մատակարարը իր մասնագետների միջոցներով, իր հաշվին, և որևէ խնդրի, այդ թվում չափսերի անճշտության պատասխանատվությունը կրում է Մատակարարը: Պետք է տրվի առնվազն 1 տարվա երաշխիք:"

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Паест 1 в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом LUFC-LUQU72F-25/108 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
3		